



# Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest

S. ՏԻՐԱՆ ԱՌ. ԲԶՆՅ. ՓԱՓԱՋԵԱՆ, ՀՈՎԻԼ

11 Օգոստոս, 1993

Գեր. Տ. Խաժակ Արք. Պարսամեան,  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմի,  
Ի ՆՅԼ Երրք, Ն.Ե.Մ

Ձերդ Արքագնութիւն,

Յայտնի է անշուշտ ձեզի ցարդ խօսուածներէն որ՝ տարուոյս նոյեմբերի 20-21-ին, եկեղեցւոյս Ս. Օծման 10-ամեակը հանդերձեալ է կատարուիլ ձեր հանդիսապետութեամբ: Տասնամեակի այս ուրախալի հանգրուանը սքանչելի առիթ մըն է Հայրապետական պարգեւատուութեամբ պատուելով համայնքիս պատուական ազգայիններէն՝ յարգելի բժիշկ Տիար Ռաֆֆի Յովհաննէսեանը, նկատի առած այս վերջնոյս ցուցաբերած բազմապիսի արժանիքները, ինչպէս նաեւ անոր կատարած ընդարձակ ծառայութիւնները ազգային, եկեղեցական եւ բարեսիրական մարզերուն մէջ: Արդարեւ 10-ամեակի այս տօնակատարութիւնը շատ գեղեցկօրէն կը պատշաճի մեծարանքին համար անձի մը՝ որու կատարած հսկայ նուիրատուութիւններուն եւ ստեղծած խանդավառութեան արդիւնքը կարելի է համարել եկեղեցւոյս շինութիւնը: Արդէն եկեղեցւոյ սրահը իր անունով կոչուած է իբրեւ Ռաֆֆի ՀՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՒՐՈՆ, առ ի երախտագիտութիւն իրեն, իսկ եկեղեցւոյս շինութեան լրումին՝ անոր Ս. Օծման կնքհայրերէն մին է, բայց եւ սակայն իր նուիրատուութիւնները երբէք չեն դադրած եւ շարունակուած են մինչեւ օրս նոյն նուիրումով:

Սիրելի Արքագան, կը յիշէք անշուշտ որ ես քանիցս շօշափած էի ձեր զգացումներն ու մտածումները այս հարցին մասին, եւ ուրախացայ հաստատելով որ դուք եւս ձեր համամտութիւնը յայտնած էիք պարգեւատուութեան մը համար Ռաֆֆիի պարագային, անոր գործունէութեան բաւականաչափ ծանօթ ըլլալով ձեր Առաջնորդի Աթոռին կոչուելէն ի վեր:

Արդ, խօսքէն գործի անցնելով՝ այսու պաշտօնապէս կը դիմեմ ձեզի սոյն խընդորանքը ներկայացնելով, հիմնուած հետեւեալ տուեալներուն վրայ:

Նախ ըսեմ որ՝ այսու ներփակած եմ յիշեալին կենսազրականը որ բաւականաչափ լոյս կը սփռէ անոր վաստակաշատ իրագործումներուն վրայ, բայց եւ այնպէս ես ինքս եւս կուզեմ տալ իմ անձնական վկայութիւնս իբրեւ այս վերջնոյս Հոգեւոր Հովիւր, պաշտօնավարութեանս վերջին հնգամեակին, երբ կոչուեցայ Հովուութեան

Շար. յաջորդ երես...

Շար. նախորդ էջէն...

Փալոս Հայթցի Ս. Յովակիմ եւ Աննա Հայց. Եկեղեցւոյ, որու Թեմական Պատգամաւորի պաշտօնը կը վարէ յարգելի բժիշկը մինչեւ օրս:

Ռաֆֆիի կեանքին ուրեմն՝ մօտէն հետեւած ըլլալով պաշտօնիս բերումով, կրնամ անվարան ըսել որ անիկա բացառիկ դէմք մըն է ոչ միայն իր իրագործումներով այլ նաեւ մանաւանդ իբրեւ մարդ որու վրայ կը խտանան եւ կը փայլին իսկական քրիստոնեայի մը շատ մը շնորհներն ու արժանիքները, ինչպէս խոնարհութիւն, համեստութիւն, աստուածավախութիւն, բարեպաշտութիւն, առատաձեռնութիւն, ազգասիրութիւն, եկեղեցասիրութիւն, բարեսիրութիւն եւ կարելի է շարքը երկարել այս գմայլելի բարեմասնութեանց որոնցմով առատապէս շնորհագարդուաճ է անիկա:

Նախախնամութիւնը տուած է նաեւ իրեն՝ շնորհափայլ կողակից մը՝ յանձին Շողակի որ բոլորանուէր աջակիցն է իր ամուսնոյն, եւ անոնք միասնաբար յառաջապահի դիրքերուն վրայ կանգնած են միշտ, Շիքակօյի զաղութէն ներս, իրենց անձնաւորութեանց մագնիսականութեամբ, գործունէութեան ուժականութեամբ եւ ծառայութեանց լայնածիրութեամբ:

Զարմանալի չէ ուրեմն որ անոնց ընտանեկան յարկը հայկական տոհմիկ տան մը աւանդական իւրայատուկ յատկութիւններով <sup>ըլլայ</sup> ~~օժտուած~~, ուր շնորհալիօրէն հասակ առած են իրենց երեք սիրասուն գաւակները՝ Արմէն, Անի եւ Այլին, որոնք բոլորն ալ ներկայիս համալսարանաւարտ են եւ հայախօս, ու կը շարունակեն իրենց ուսումը առաւել եւս մասնագիտանալով իրենց ընտրած միւլդերուն մէջ:

Ռաֆֆիի ծառայութիւնը չի սահմանափակուիր սակայն լոկ մեր ծխական համայնքէն ներս տարած իր աշխատանքով եւ ո՛չ ալ Թեմական մակարդակի վրայ ունեցած իր ծառայութեամբ, այլ ինչպէս ակնարկեցի վերեւ, անոր ծառայութեան դաշտը կ'ընդգրկէ մեր բովանդակ ժողովուրդը իր այլազան կարիքներով, առանց հատուածականութեան: Այս պատճառաւ զինքը կը գտնենք ազգային, եկեղեցական եւ բարեսիրական գանազան կազմակերպութեանց պատասխանատու մարմիններու անդամակցութեան մէջ: Տակաւին վերջերս էր՝ պարտականութեան ծայնը զինք տարաւ Հայաստան, հոն կարգ մը հիւանդանոցներու գործընթացը քննարկելու եւ համապատասխան թելադրութիւններ ընելու պատասխանատուութեամբ, ուր եւ նաեւ Հայրապետական ունկնդրութեան արժանացած է: Զինքը կը տեսնենք Ս. Ներսէսի խնամակալութեան վրայ, զինք կը տեսնենք Բարեգործականի միջազգային կեդրոնական մարմնոյն վրայ, եւ տակաւին այլեւայլ ազգօգուտ կազմակերպութեանց վարչութեանց վրայ, թէ՛ իբրեւ խորհրդատու եւ թէ՛ իբրեւ

Շար. յաջորդ թերթին վրայ...



# Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor  
Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest  
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԶԻՆՅ. ՓԱՓԱՔԵՆԱՆ, ՀՈՎԻԼ

Շար...

գործօն ուժ եւ միշտ նուիրատու: Մէկ խօսքով իր պատասխանատուութեան խոր զգացումը զինքը տարած է հոն ուր կարիքը զգացուած է իր աջակցութեան, նիւթապէս, բարոյապէս եւ գործնականօրէն:

Կարելի է ըսել Ռաֆֆիին մասին որ՝ Շիրակոյի գաղութին մէջ մեծապէս յարգուած այն ածն է անիկա՝ որու հեռախօս ազդեցութիւնը կ'ընդգրկէ լայնատարած մանաչում ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ:

Հոս պէտք է յիշենք նաեւ այն շատ կարեւոր ծառայութիւնը որ Յովհաննէսեան ամուր կը մատուցանէ, Միացեալ Նահանգաց ծերակուտականներու եւ քանկրէսմեններու ի նպաստ իր տարած աշխատանքով, անոնց ընտրապայքարներուն համար գումարներ ապահովելով, մեծածախս մշակերոյթներ սարքելով իրենց տան մէջ, եւ այսպէսով այս վերջիններուն համակրանքը շահելով ի նպաստ Հայ դատին, ներկայ Հայաստանին եւ Արձախի, եւ ի հետեւանք՝ պետական օժանդակութիւն ապահովելով ներկայի տագնապալի օրերուն:

Սիրելի Սրբազան, այսքանը ըսելէ վերջ, ի վերջ բանիս կուզեմ կարեւորութեամբ շեշտել սա կարեւոր կէտը որու պատճառները անցեալին բացատրած եմ ձեզի, սա այն է որ՝ Ռաֆֆիի պարագային՝ Հայրապետական պարգեւատուութեան միջնորդութիւնը ուղղակի ձեզմէ պէտք է գայ իբրեւ Թեմակալ Առաջնորդ, ինչ որ ձեր իրաւասութեան մէջ կ'իյնայ, եւ դուք այս բանը կ'ընէք նկատի առած անշուշտ ենթակային ներկայացուցած արժանիքները եւ տարած ամբողջանուէր ծառայութիւնները յօգուտ մեր եկեղեցւոյ եւ ազգին:

Զերմօրէն կը յուսամ որ դուք նկատի պիտի առնէք վերոյիշեալ վկայութիւնը եւ ըստ այնմ արդար կարգադրութիւն մը պիտի ընէք, Հայրապետական կոնդակ մը ապահովելով անուրանալի արժանիքներով օժտուած այս մեծարժէք Հայուն:

Մնամք Խոնարհաբար  
Աղօթակից՝  
*S. Sirhan*  
Տ. Տիրան Ա. Զինյ. Փափագեան  
Հովիւ